

Վերահասարակված է
Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 30.08.2022թ.-ի նիստում (արձ. թիվ 1)
ամբիոնի վարիչ՝ Զ. Գյուլամիրյան

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Մագիստրոսի մանկավարժահետազոտական պրակտիկա
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Սկզբնական կրթության ֆակուլտետ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
ԱՄԲԻՈՆ	Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի
<ul style="list-style-type: none"> ▪ մասնաշենք/սենյակ ▪ հեռախոս ▪ էլ հասցե ▪ Web կայքի հասցե 	010-59-70-62 Sk-8@aspu.am www.aspu.am
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Հուսինե Պողոսյան, Արմինե Միքայելյան
ՈՒՍՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-րդ կուրս, 1-ին կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 կրեդիտ
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ	180 ժամ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ	Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Գիտական հետազոտության քանակական մեթոդներ, ընտրովի դասընթացներ դասավանդման մեթոդիկաներից, Մանկավարժական սեմինար, Գիտական գրավոր խոսք:

<p>ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Սույն պրակտիկայի ընթացքում ուսանողը կքննարկի մանկավարժական գործընթացի առանձնահատկությունները կրթական հաստատությունում /դպրոցում և բուհում/, կքննարկի մանկավարժական տարբեր իրավիճակներ, համագործակցելով ընկերների և ավագ գործընկերների հետ՝ կառաջարկի լուծման տարբերակներ: Հանդես կգա մասնագիտական հանրության առջև որևէ հիմնախնդրի վերաբերյալ զեկույցով, կկազմակերպի դրա շուրջ մասնագիտական քննարկում: Ուսանողը հնարավորություն կունենա վարել դասեր (կամ դրանց որևէ հատված) դպրոցում/բուհում, քննարկել և գնահատել իր գործընկերների վարած դասերը: Ուսանողը կիրականացնի հետազոտություններ մագիստրոսական թեզի շրջանակներում, կկատարի վերլուծություններ, կկազմի պրակտիկայի թղթապանակ:</p>
<p>ՆՊԱՏԱԿ</p>	<p>Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ներգրավել ուսանողներին ուսումնական հաստատությունների մանկավարժական գործընթացի մեջ՝ իբրև ապագա դասավանդող և հետազոտող:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p>Մասնագիտական գիտելիք և իմացություն</p>	<p>Ա.Մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի</p> <p>Ա1. Իմանա մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները դպրոցում և բուհում: Ա2. Իմանա սովորողի տարիքով պայմանավորված դասավանդման առանձնահատկությունները, ռազմավարությունները:</p>
<p>Գործնական մասնագիտական կարողություններ</p>	<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի</p> <p>Բ1. Քննարկել և գնահատել մանկավարժական գործընթացը, մանկավարժական տարբեր իրավիճակներ: Բ2. Վարել պարապմունքներ դպրոցում/մանկապարտեզում, կարճատև դասընթացներ բուհում: Բ3. Ընտրել և կիրառել հետազոտության մեթոդներ, վերլուծել արդյունքները: Բ4. Վերհանել և վերլուծաբար ներկայացնել մասնագիտական հիմնախնդիրներ:</p>
<p>Ընդհանրական/ փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)</p>	<p>Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի</p> <p>Գ1. Համագործակցել ընկերների և ավագ գործընկերների հետ: Գ2. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական խնդիրներ լուծելու նպատակով:</p>

--	--	--

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.
 Ա1. Ա2. Բ1. Բ2. Գ1. Գ2.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		<ol style="list-style-type: none"> 1. Թովուզյան Ա., Պողոսյան Լ., Հարությունյան Գ., «Մագիստրոսի հետազոտական աշխատանքների թղթապանակ», «Մխիթար Գոշ», /Գիտ. Հոդվածներ/, 2, 2017թ., էջ 4-12: 2. Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ: 3. Հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների դասագրքեր: 4. Հանրակրթության պետական չափորոշիչ, առարկայական ծրագրեր, ուսումնական պլաններ:
Լրացուցիչ		armedu.am, aniedu.am, ktak.am կայքէջեր, էլեկտրոնային նյութեր

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Բաղադրիչ 1 – 10% (հաճախում) Բաղադրիչ 2- 20% (հետազոտական կարողություններ) Բաղադրիչ 3- 25% (գործնական կարողություններ) Բաղադրիչ 4- 45% (պրակտիկայի արդյունքների պաշտպանություն)				
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	Գնահատման բազմազոր ծոն համակարգ	Գնահատականի թվային համարժեքը	ԿՓԵՀ / տառային գնահատական	Ուսանողների գիտելիքների բնութագիր	Հանրագումարային ստուգմամբ
	100-97	4.0	A	Անցողիկ գնահատականներ	
	96 - 90	3, 7	B		
	89 - 85	3, 3			
	84 - 80	3, 0	C		
	79 - 70	2.7			
	69 - 65	2.3			
	64 - 60	2.0	E		
	59 - 41	1.7	FX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ	

	40-ից ցածր		F	ԱՆԲԱՎԱՐԱՐ	
	100-60	4.0-2.0	S	Անցողիկ գնահատական ներ	Միջանկյալ ստուգմամբ
	59 - 41	1.7	UX	ՈՉ ԲԱՎԱՐԱՐ	
	40-ից ցածր		U	ԱՆԲԱՎԱՐԱՐ՝	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է ուսանողի ողջ տարվա ընթացքում կատարած աշխատանքների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է համապատասխան ներքոհիշյալ բաղադրիչների: Յուրաքանչյուր բաղադրիչի դիմաց նշված առավելագույն տոկոսը կարելի է հավաքել ծրագրային պահանջների շրջանակներում տվյալ կետի տակ ներկայացված պահանջները 100% -ով կատարելու դեպքում:				
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ուսանողը պրակտիկայի ընթացքում կատարած բոլոր աշխատանքների արդյունքները պետք է ընդգրկի ուսումնական թղթապանակի մեջ և պաշտպանի պրակտիկայի ավարտին՝ սեմինար-քննարկման ժամանակ:				
Ներկայություն	Առարկայական նկարագրի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: Ուսանողի ներկայությունը պրակտիկային բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկրնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների, հետազոտությունների կատարում և ներկայացում:				
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ	Ինքնուրույն, գործնական, հետազոտական աշխատանքները անհրաժեշտ է կատարել համագործակցելով իր համակուրսեցիների և ավագ գործընկերների հետ: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: Նկարագրով սահմանված ժամանակահատվածից (առանց հարգելի պատճառի) ուշ ներկայացվող աշխատանքները չեն ընդունվում և ուսանողը կորցնում է համապատասխան տոկոսները:				

**Թղթապանակի
պաշտպանություն**

Ուսանողը պրակտիկայի ընթացքում կատարած բոլոր աշխատանքների արդյունքները պետք է ընդգրկի ուսումնական թղթապանակի մեջ և պաշտպանի պրակտիկայի ավարտին՝ սեմինար-քննարկման ժամանակ: